## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/41» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «06» սեպտեմբերի 2018թ.

Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Ավետիք Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Հովհաննես Ստեփանյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Էլլադա Արզաքանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Ավան նստավայրի պատասխանատու,

**Լիլիթ Հովհաննիսյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ ԳՊ/ԲԱ) Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Օֆելյա Ասատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԿ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**Հանձնաժողովը որոշեց.**

**2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«ՍԱՔԻ», «Զորաշեն», «Ֆոտոն», «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ», «Երվադա», «Արգավանդ Կահույք», «ՍՏԱՆԴԱՐՏ 2014», «Սմարթլայն» և «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ների և ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ և Ռայա Գրիգորյան Միշայի Ա/Ձ-ների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

**3. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

3.1 «ՍԱՔԻ», «Զորաշեն», «Ֆոտոն», «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ», «ՍՏԱՆԴԱՐՏ 2014», «Երվադա», «Սմարթլայն» ՍՊԸ-ների և ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ և Ռայա Գրիգորյան Միշայի Ա/Ձ-ների

կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

3.2 «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է/են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ 22 և 23-րդ չափաբաժինների, որոնց մասով ներկայացրած գնային առաջարկում (Հավելված 5) կան գնային առաջարկի հաշվարկային անճշտություններ:

Հանձնաժողովը որոշեց «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի, հայտը 22 և 23-րդ չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և 41-րդ կետը:

3.3 «ՄԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է/են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումի (Հավելված 1), որում ներկայացված չափաբաժիններից մեկի համարը սխալ է լրացված:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

-հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2018թ. սեպտեմբերի 10-ին, ժամը 12:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

«ՄԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև նիստի կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ ______________ Ավետիք Ավագյան

Անդամներ՝ ______________ Հովհաննես Ստեփանյան

______________ Կարեն Մելքոնյան

______________ Էլլադա Արզաքանյան

______________ Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝ ______________ Օֆելյա Սաստրյան